Հայոց լեզվի մարզային օլիմպիադայի հարցաշարերի պատասխաններ

9-րդ դասարան

1. ա) Ճշմարտությունը հիվանդանում է, բայց չի մեռնում, ճշմարտությունը միշտ հաղթանակում է, ստի ոտը կարճ է, սուտը միշտ ջրի երես է դուրս գալիս, բ) մերկ ճշմարտություն
2. Չար, դաժան, անգութ, անհաշտ, կռվարար,
   երկբայել, կասկածել, տարակուսել, երկմտել
   բարյացակամ, բարեհաճ, սիրալիր, սիրահոժար, պատրաստակամ
   խարդախ, խաբեբա, չարաբարո, չարասիրտ, նենգամիտ, նենգաբարո
   հմայիչ, գրավիչ, թովիչ, դյութիչ, հրապուրիչ,
3. երկ (երկու) + *վոր* + *յակ*, ակն (ը ձայնավորի սղումով) + ա + հաճ + *ո*, խարտիշ (խարտյաշ, յա-ե) + ա + հեր, հոգե (հոգի) + ա (իա-ե) + թով, *առ* + աջ + արկ + ել,
4. Այն գիտեմ, որ ոչինչ չգիտեմ: Ինչքան էլ իմանամ, դարձյալ սովորելու տեղ ունեմ:

10-րդ դասարան

2. ոսկեծուփ, գետնատարած, կենսառաք, ոսկեհատ, հինավուրց, փրփրակոհակ, ինքնիշխան, սրբատաշ
4. անընկճելի, անհաղթելի, աննվաճ, անխորտակելի, տոկուն
   անվեհեր, համարձակ, սեգ, հպարտ
   հինավուրց, հնամենի, հնագույն, հնադարյան, հնօրյա, հնամյա, հին,
   հայրենիք, բնօրրան, ծննդավայր
   կենարար, կենսատու, կենսաբեր, կենսալի
5. *Արեգակը ծագելիս աստղերը կորչում են:*
   Մեծությունների կողքին փոքրությունները նսեմանում են կամ խամրում են:
   Ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ:
   Ամեն չարիք մարդու միտքն է մտնում անուսումությունից:

11-րդ դասարան

2. եմ, գալ, թողնել, լինել, կա, դնել, դառնալ:
3. Ճարտարապետն ու շինարարն եմ ես այն կոթողների, որոնք վեր են խոյացել հայոց երկնամուխ լեռների կատարներին: Բնույթը՝ որոշիչ:
4. «սիզիֆյան աշխատանք»: Նշանակում է՝ անընդհատ կրկնվող, ծանրագույն, բայց և անօգուտ աշխատանք:
5. Խորենացին եմ, որ հայոց պատմության վաղնջական ժամանակներից եկող հորդահոս գետը դրեցի հունի մեջ, որ նա, հավերժ հոսելով, խոսի մեր փոքրաթիվ ժողովրդի մեծ սխրանքների մասին:

Նարեկացին եմ՝ հայոց լեռներից ժայթքած բանաստեղծական այն ամեհի հրաբուխը, որ իր դղրդոցով դարեր է սասանում:

Գառնին եմ, Զվարթնոցը՝ իմ հողի վրա քարե անջնջելի ստորագրություն ու կնիք դնողը:

12-րդ դասարան

2. *Դարերի վաղնջական հոլովույթի միջից ահա դեպի մեզ է գալիս տոկուն ու առնական մի ճամփորդ՝ երկնքի լաջվարդը աչքերում, հայացքը դեպի բիբլիական հրաշափառ լեռը:*

Երեսունվեց հրաշագործ ու մոգական զինվորներով մի ամբողջ ժողովուրդ փրկած այրն եմ ես՝ Մեսրոպ անունով:

Միջնադարյան ծաղկողների հավաքած որդան կարմիրը, արևի ոսկին ու երկնքի կապույտն ինձ հասան, որ հայոց ներկապնակը ողողվի բոսորավառ արևով ու լույսով:
3. գալիս է – սահմ. եղ. ներկա , ունեմ – սահմ. եղ., ներկա, եղել է - սահմ եղ. վաղակատար, հասան – սահմ. եղ. անցյալ կատարյալ, ողողվի – ըղձական ապառնի
4. «*Բայց մի՞թե մի անուն ունեմ ես և ապրելով բոլոր դարերում, լինելով աշխարհի բոլոր ծայրերում՝ կարո՞ղ էի մի անուն ունենալ:* Բնույթը՝ պայմանի պարագա:
5. ճոխ գինարբուք, խրախճանք

խճճված, կնճռոտ, անլուծելի թվացող հարց